ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» (ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 14 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված՝ «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 16 հունվարի 2017թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի Հանրապետությանը Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի տրանսպորտային արդյունավետության ու անվտանգության բարելավման համար 44.037.000 եվրո վարկ տրամադրելու նպատակով:

2. Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության տարածքում Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի տրանսպորտային արդյունավետությունն ու անվտանգությունը: Ծրագիրը ներառում է Մ6 մայրուղու Վանաձոր-Բագրատաշեն հատվածի՝ մոտ 51.5 կմ-ի վերակառուցում՝ բարելավված

ճանապարհային ծածկույթով, անվտանգության ապահովման և կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցներով և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (Ծրագրի իրականացման մարմին) ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում և Ծրագրի իրականացման ուղղությամբ աջակցություն: Ծրագիրը պետք է ներառի խորհրդատվական ծառայությունների ապահովում շինարարության վերահսկման, Ծրագրի կառավարման, Ծրագրի աուդիտի, անվտանգության միջոցառումների իրականացմանն ուղղված աջակցության, պայմանագրի կառավարման, գնումներին ուղղված աջակցության, ճանապարհային անվտանգության և վերապատրաստումների համար:

3. Ըստ Վարկային համաձայնագրի՝ Ասիական զարգացման բանկը համաձայնում է Ասիական զարգացման բանկի ընթացիկ կապիտալ ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քառասունչորս միլիոն երեսունյոթ հազար եվրո (44.037.000 եվրո) (այսուհետ՝ Վարկ): Վարկն ունի հիմնական գումարի 22 տարի մարման ժամկետ և արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 2032թ. մայիսի 15-ը: Ծրագիրն ակնկալվում է ավարտել մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Ասիական զարգացման բանկին վճարել տոկոսադրույք առհանված և չվճարված Վարկի մայր գումարի մասով (հոդված II, բաժին 2.02),

- Վարկային համաձայնագրի ժամկետից 60 օր հետո՝ կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավճար, որը հաշվարկվում է Վարկի ամբողջական գումարի մասով (հանած ժամանակ առ ժամանակ առհանված գումարները) (հոդված II, բաժիններ 2.03 և 2.04),

- սկսած 2032թ. մայիսի 15-ից մինչև 2038թ. նոյեմբերի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին մարել Վարկի հաշվից առհանված Վարկի մայր գումարը՝ 2032թ. մայիսի 15-ից մինչև 2038թ. մայիսի 15-ը 7.142857%, իսկ

2038թ. նոյեմբերի 15-ին 7.142859% մասնաբաժիններով (հոդված II, բաժին 2.05, Առդիր 2, կետ 1),

- վարկային միջոցներն օգտագործել Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

- Ասիական զարգացման բանկի կողմից այլ որոշում չկայացվելու դեպքում Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող առարկաները գնել կամ ձեռք բերել Վարկային համաձայնագրի Առդիր 4-ում նախատեսված դրույթներով սահմանված կարգով, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի կողմից այլ որոշում չկայացվելու դեպքում Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող առարկաներն օգտագործել բացառապես Ծրագրի իրականացման նպատակով (հոդված III, բաժիններ 3.03 և 3.04),

- ապահովել Ծրագրի իրականացումը պատշաճ պատասխանատվությամբ ու արդյունավետությամբ և տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի և զարգացման ընդունելի գործընթացներին համապատասխան, ինչպես նաև Ծրագիրն իրականացնելիս և Ծրագրի կառույցները շահագործելիս կատարել կամ նպաստել Վարկային համաձայնագրի Առդիր 5-ում նախատեսված պարտականությունների կատարմանը (հոդված IV, բաժին 4.01),

- Վարկային միջոցներից զատ՝ Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պայմաններով ապահովել ֆինանսական միջոցների, կառույցների, ծառայությունների, հողի և այլ անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը՝ Ծրագիրը և Ծրագրի կառույցների շահագործումն ու սպասարկումն իրականացնելու նպատակով (հոդված IV, բաժին 4.02),

- կիրառելիության դեպքում, Ծրագիրն իրականացնելիս, ապահովել Ասիական զարգացման բանկի համար ընդունելի՝ իրազեկ և բարձր որակավորում ունեցող խորհրդատուների և կապալառուների ներգրավումը՝ Հայաստանի Հանրապետությանը և Ասիական զարգացման բանկին բավարարող չափով և պայմաններով (հոդված IV, բաժին 4.03, կետ «ա»),

- ապահովել Ծրագրի իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության ու Ասիական զարգացման բանկի համար ընդունելի պլանների, նախագծման ստանդարտների, տեխնիկական բնութագրերի, աշխատանքային Առդիրների և շինարարության մեթոդների համաձայն, և Ասիական զարգացման բանկին տրամադրել այդ պլանները, նախագծման ստանդարտները, տեխնիկական բնութագրերը, աշխատանքային Առդիրները և դրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ նյութն անմիջապես դրանք մշակելուց հետո և Ասիական զարգացման բանկի կողմից ողջամտորեն պահանջվող մանրամասնությամբ (հոդված IV, բաժին 4.03, կետ «բ»),

- ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացմանը և Ծրագրի կառույցների շահագործմանն առնչվող վարչությունների և գործակալությունների գործունեությունն իրականացվի և համակարգվի վարչարարական ճիշտ քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան (հոդված IV, բաժին 4.04),

- ապահովել Ծրագրի կառույցների շահագործումը, սպասարկումը և վերանորոգումը՝ տեխնիկական, ֆինանսական, բիզնեսի, զարգացման, շահագործման և սպասարկման՝ գործող սահուն գործընթացների համաձայն (հոդված IV, բաժին 4.07):

Հայաստանի Հանրապետությունը Վարկային համաձայնագրի համաձայն ստանձնել է նաև այլ պարտավորություններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2016 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված՝ «Հայաստան-Վրաստան սահմանային

տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր» (ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 փետրվարի 2017 թվականի
ՍԴՈ-1347